

ՄԱՆԿԱՊԱՏԱՆԵԿԱՆ ՀՈՐԻԶՈՆ

ՅԱԽԵԼՈՒԱԾ «ՀՈՐԻԶՈՆ» ՇԱԲԱԹԱԹԵՐԹԻ

Յունուար 2025


ՄԵՐ ԽՕՍՔԸ

Սիրելի Աշակերտներ,

Ինչպես որ վայրկեանները, ժամերը եւ օրերը կ'անցնին, կ'երթան, այդպես ալ տարիները կ'անցնին: Եւ ամէն տարի Յունուարի մէկին կը սկսի Նոր Տարի մը:

Նոր Տարին իրականութեան մէջ, կախեալ է նաեւ մեզմէ. երբ մենք Նոր Տարուան հետ, կ' առնենք նոր որոշումներ, կը ճշդենք նպատակ եւ նոր ձեւեր կը գտնենք հասնելու մեր թիրախին (cible, target), իրականացնելու մեր երազները:

Բարի եւ յաջող Նոր Տարի բոլորիս:



Յունուարին կը նշուի Հայկական Բանակին տօնը: Եկէք նաեւ յաջող Նոր Տարի մաղթենք մեր բանակին եւ հոն ծառայող ամէն մէկ հայ զինուորին: Յիշենք նաեւ մեր անմահները, որոնք կը ներշնչեն մեզ, շարունակելու մեր պայքարը մինչեւ յաղթանակ:

Մենք կը հաւատանք, որ Հայկական Բանակը ունեցած է եւ ունի տակաւին քաջ ու խելացի զօրավարներ ու զինուորներ, որոնք պիտի կարենան յաղթահարել ներկայի դժուարութիւնները: Կը հաւատանք նաեւ, որ հարստացնելով մեր բանակը արդիական սարքերով, հայ զինուորը պիտի կարենայ աւելի լաւ պաշտպանել մեր սահմանները: Ուժդ անսպառ, հայ զինուոր:

Տօնդ շնորհաւոր:

ԲԱՆԱԿԻ ՕՐ

Հայկական Բանակին տօնը կը նշուի 28 Յունուարին, որովհետեւ 28 Յունուար 1992-ին, Հայաստանի Հանրապետութեան բարձրագոյն ղեկավարութիւնը «Հայաստանի Հանրապետութեան պաշտպանութեան վերաբերեալ» որոշում մը կայացուց:

Հայկական Բանակը ծանօթ է նաեւ ՀՀԶՈՒ կրճատումով, որ կը նշանակէ Հայաստանի Հանրապետութեան Զինուած Ուժեր:

Հայկական Բանակը հիմնուեցաւ Արցախեան առաջին պատերազմի կամաւորներու խումբերով: Անոնց նպատակն էր պաշտպանել Արցախի հայութիւնը ազերիներու յարձակումներէն:

Հայկական Բանակը իր բոլոր քաջագործութիւններով միայն ուժ եւ հպարտութիւն կը ներշնչէ հայութեան: Եւ հայ ժողովուրդը հայ զինուորի հայրենասիրութիւնը, կամքն ու նուիրումը բարձր կը գնահատէ: Հայրենի հողը սուրբ է, իսկ անոր տէր ու պաշտպանն է հայ զինուորը:

Մեծ յարգանք Հայկական Բանակին:



ԳԱՐԵԳԻՆ ՆՇԴԵՀ



Գարեգին Նշեցիի բուն անունն է Գարեգին Տէր Յարութիւնեան, ծնած է Նախիջեան, 1 Յունուար 1886-ին: Դպրոցը աւարտելէն ետք, ան 17 տարեկանին կը մտնէ Հայ Յեղափոխական Դաշնակցութեան շարքերը: Նշեցի բարձրագոյն կրթութիւն ստանալու համար կ'երթայ Սենթ Փեթերսպուրկ, իբրեւ իրաւաբանութեան ուսանող: 1905-ին կը մտնէ Պուլկարիոյ զինուորական վարժարանը, զոր կ'աւարտէ մեծ յաջողութեամբ: Կը վերադառնայ Կովկաս եւ 1909-ին կը ձերբակալուի ցարական կառավարութեան կողմէ: 1911-ին ազատ արձակուելով կը վերադառնայ Պուլկարիա եւ 300 հոգինոց հայ գունդով կը մասնակցի Պալքանեան պատերազմին:

1914-ին, Նշեցի կը նշանակուի կամաւորական Բ. գունդի փոխ իրամանատար, զօրավար Դրոյի հետ: Մայիս 1918-ին կը վարէ Ղարաքիլիսէի ճակատամարտը, կը վիրաւորուի եւ կ'արժանանայ ամենաբարձր քաջութեան շքանշանին:

Օգոստոս 1919-ին կ'անցնի Զանգեզուր, որ այսօրուան Սիւնիքն է: Նշեցի դէմ կը դնէ Էդիֆ պէյի զօրքերուն, որոնք սովի եւ սուրի մատնած էին հայութիւնը: Իր շնորհիւ կը փրկուի թէ Սիւնիքը, թէ այդտեղի հայութիւնը:

Հայաստանի խորհրդայնացումէն եւ Փետրուարեան ապստամբութենէն ետք, մինչեւ 1921-ի ամառը, Նշեցի դէմ կը դնէ համայնավար յարձակումներուն եւ կը դառնայ ինքնավար Սիւնիքի բացարձակ ղեկավարը:

Առանց բաւարար հացի, առանց ռազմամթերքի եւ առանց արտաքին օգնութեան, քաղաքական գետնի վրայ մինակ, աւելի քան մէկ տարի տեւող անհաւասար կռիւներէ ետք, Նշեցի կը յաղթէ թրքական բանակին եւ իր շնորհիւ յաղթական Սիւնիքը կը մնայ միացած իր մայր հողին՝ Հայաստանին:

Այս քաջ հերոսը 10 Յուլիս 1921-էն ետք, կ'անցնի Պարսկաստան, յետոյ Պուլկարիա, աւելի ուշ Ամերիկա, ուրկէ կը վերադառնայ Պուլկարիա:

1944-ին, երբ Կարմիր բանակը կը գրաւէ Ռումանիան, Նշեցիի ներկայութիւնը Պուլկարիոյ մէջ կը դառնայ վտանգաւոր: Իր ընկերներուն կեանքը փրկելու համար, կը յանձնուի կարմիր իշխանաւորներուն, որոնք զինք կը բանտարկեն նախ Սոֆիայի մէջ, յետոյ կը փոխադրեն Մոսկուա, ապա Երեւան եւ վերջապէս Սիպերիա, ուր կը մահանայ 1955-ին, բանտի անմարդկային պայմաններուն մէջ:

ՈՍԿԻ ԽՕՍՔԵՐ



«Առաջնորդուած եմ Մամիկոնեաներու ուխտով, եղած եմ խոր հաւատքի եւ բարոյական սկզբունքներու մարդ, եւ այդ իսկ պատճառով յաճախ դատարկած եմ դառնութեան բաժակներ: Հաւատքի եւ պաշտամունքի տաճարին մէջ, միշտ առաջին տեղերը յատկացուցած եմ Աստուծուն եւ Հայրենիքիս: Հայաստանը եղած է երկրաւոր սրբազնագոյնը ինձ համար: Այդ եղած է իմ սրբազան ցաւը, կարօտը, ուրախութիւնը, իմ գոյութեան իմաստը, իմ անմահութիւնը, իմ գերագոյն իրաւունքն ու պարտականութիւնը. միաժամանակ երկրի ժողովուրդը ջերմօրէն կապուած եւ կուրօրէն հաւատացած է ինձ»:

Գարեգին Նժդեհ

«Հայը Հայաստանէն դուրս ենթակայ է վատասերումի: Այդ չարիքի դէմ պաքարիլ կարելի է միայն ցեղային արժէքներու, առաքինութիւններու եւ սրբութիւններու խոր ճաշակունով ու վերապրումով, բան մը, որ հիմնաւորեցի եւ անուանեցի Յեղակոծութիւն: Նպատակ ունենալով անհայրենիք հայութեան հոգեւոր ու քաղաքական անտուն անտէրութենէն փրկելով, դարձնել հայրենատէր: Այս հայրենատիրական շարժումն է, որուն մէջ վերանորոգուելով միայն պիտի միանան հայութեան բոլոր հատուածները»:

Գարեգին Նժդեհ

ՔԱՅԼ ԱՌ ԱՌԱՋ

Թաթա Սիմոնեան



Հայրենիք՝ անկախ եւ ազատ,
Հայրենիք՝ իմ մայր հարազատ,
Զաւակներդ հօգոր, անվեհեր,
Հսկում են լեռներդ պեհեր,
Որդիներդ անվախ Զաւուշի,
Նժդեհի, Անդրանիկի:

Քայլ առ առաջ,
Քայլերդ շիտակ,
Քայլերդ շիտակ,
Քայլերդ շիտակ,
Զինուոր ես դու
Ու եկել ես բանակ
Հայկական:

Քայլ առ առաջ
Քայլերդ շիտակ,
Քայլերդ շիտակ,
Քայլերդ շիտակ,
Զինուոր ես դու
Ու եկել ես բանակ
Հայկական,
Ոչ թէ հասարակ:

Հայկազուն զինուոր փառաւոր,
Հայկի պէս եղիր զօրաւոր,
Պապերիդ փառքին արժանի,
Նրանց պէս հպարտ ու քաջարի,
Զթողնես մօտենայ թշնամին
Մեր հողին, մեր սահմանին:

Քայլ առ առաջ,
Քայլերդ շիտակ,
Քայլերդ շիտակ,
Քայլերդ շիտակ,
Զինուոր ես դու
Ու եկել ես բանակ
Հայկական:

Քայլ առ առաջ
Քայլերդ շիտակ,
Քայլերդ շիտակ,
Քայլերդ շիտակ,
Զինուոր ես դու
Ու եկել ես բանակ
Հայկական,
Ոչ թէ հասարակ:



Թաթայի այս խանդավառ ու քաջալերող երգը լսելու համար, կարելի է երթալ YouTube : Tata Simonyan - Qayl ar araj



ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ԽԱՂԵՐ



Համահայկական առաջին խաղերը Երեւանի մէջ տեղի ունեցած են 1999-ին (23 Օգոստոսէն մինչեւ 5 Սեպտեմբեր): Խաղերու կրակը Գառնիի հեթանոսական տաճարէն փոխանցւած զգրքերով հասած է Հրազդան մարզադաշտ, ուր Ալպերթ Ազարեան վառած է խաղերու ջահը: Այս խաղերուն մասնակցեր են Հայաստանի եւ Արցախի 24 մարզիկ-մարզուիիներ, ինչպէս նաեւ արտասահմանեան 21 պետութիւններու 38 քաղաքներու 1141 մարզիկ-մարզուիիներ:

- Խաղերը տեղի ունեցած են 7 մարզաձեւերով՝
- Ա.- կողովագնդակ (basketball)
- Բ.- աթլետ
- Գ.- թենիս
- Դ.- ճատրակ
- Ե.- սեղանի թենիս (ping-pong)
- Զ.- ոտնագնդակ (soccer)
- Է.- volleyball



Այս մագական մրցումները նախապէս տեղի կ'ունենային 2 տարին անգամ մը, բայց ներկայիս կը խաղցուին 4 տարին անգամ մը: Ութերորդ համահայկական խաղերը տեղի ունեցան 5-էն 19 Օգոստոս 2023-ին, որուն մասնակցեցան 7161 մարզիկ-մարզուիիներ (179 քաղաքներէ), եւ խաղցուեցան 17 մարզաձեւեր:



Գառնիի հեթանոսական տաճար



Հրազդան մարզադաշտ



Ալպերթ Ազարեան, որուն մասին անդրարարձած էին Հորիզոն Մանկապատանեկանի Հոկտեմբեր 2023-ի թիւով «Օղակներու թագաւոր» Ալպերթ Ազարեան խորագրին տակ:

ՎԱՐՔ ՈՒ ՎԱՐՈՒԵԼԱԿԵՐԴ ՄԱՔՈՒՐ ԸԼԼԱՆՔ

Անահիտ Պալեան


Ուրախ ու սիրուած ըլլալու համար, Ըլլանք մաքուր: Առտուն երբ արթնանք, Մեր դէմքը լուանք: Օրուան ընթացքին, Ուտել առաջ եւ վերջ Ձեռքերը լուանք: Գիշերը չքնացած Ակոսները վրձինելու չմոռնանք: Շաբաթը երկու կամ երեք անգամ Անպայման լոգանք: Օրինատը ձեռք կտրենք Մեր ոտքի եւ ձեռքի եղունգները, Խնամքով սանտրենք Մեր մազերը:



Ուրախ ու սիրուած ըլլալու համար, Չի բաւեր պահել մարմինը մաքուր, Աշխատինք պահել մեր լեզուն մաքուր, մեր սիրտը մաքուր, մեր հոգին մաքուր: Խօսինք միշտ հանդարտ, առանց պոռալու: Մեր միտքը յայտնենք բարի խօսքերով, Մեր օրը լեցնենք բարի գործերով:



ԹԱՏՐՈՆ



Թատրոնը արուեստի ճիւղ մըն է:

Թատրոնը խաղ մըն է բեմին վրայ, ուր դերասաններ իրենց դերերը կը խաղան: Անոնք իրենց տարբեր դերերով հանդիսատեսին կը ներկայացնեն կեանքէն օրինակներ: Յաճախ Թատրոնի մը ընդմէջէն կը բացայայտուին մարդ արարածի մը տկարութիւններն ու պակասատր երեւոյթները, հետեւաբար թատրոնը կու գայ պատգամ մը փոխանցելու հանդիսատեսին: Այսպէս, հին ժամանակ յոյները թատրոնը կը նկատէին որպէս «մեծահասակներու դպրոց»:

ԳԻՏԷՔ ԹԵ...

Աշխարհի ամենահզօր ջրվէժը Նիակարայի ջրվէժն է: Ջուրի աղմուկը կը լսուի 25 քմ. հեռավորութենէն: Նիակարա Iroquois լեզուով «Onguiaahra» կը նշանակէ մեծ աղմուկ: Այլապէս ան տարբեր իմաստներ ունի.

- 1- Նեղուց, որ կը նշանակէ երկու ցամաքի միջեւ ծովային նեղ անցք:
2- Մեծ քանակութեամբ որել բան:

Աշխարհի ամենաբարձր ջրվէժը Վենզուէլլայի Անխել (Angel) ջրվէժն է, որ կը հոսի 1054 մետր բարձրութենէն:

Աշխարհի ամենալայն ջրվէժը Ափրիկէի Վիքթորիա ջրվէժն է, որուն լայնութիւնը կը հասնի 1800 մետրի:

Նորվեկիոյ մէջ այնքան շատ ջրվէժներ կան, որ ան նաեւ կը կոչուի ջրվէժներու երկիր:

Բազմաթիւ ջրվէժներ կան նաեւ Հայաստանի մէջ, որոնցմէ ամէնէն բարձրը՝ Ջերմուկի ջրվէժն է: Հայաստանի ջրվէժներու շարքին նշենք գեղատեսիլ Շաքիի ջրվէժը, որ կը գտնուի Սիւնիքի մարզին մէջ, Շաքի գետին վրայ, Որոտանի կիրճին մէջ (կիրճ կը նշանակէ լեռներու միջեւ նեղ անցք): Շաքիի ջրվէժի բարձրութիւնն է 15-17 մետր:




Նիակարայի ջրվէժը



Շաքիի ջրվէժը

Ո՛Վ Է ԱԼՖՐԵՏ ՆՈՊԵԼ

Ալֆրետ Նոպէլ շուէտացի քիմիագէտ, ճարտարագէտ եւ գիտնական մըն է, որ ստեղծած է ուժանակը (dynamite): Ան իր ամբողջ դրամը տուած է հիմնելու մրցանակ մը, որ իր անունով կը կոչուի Նոպէլեան մրցանակ:



Մրցանակի նպատակն է վարձատրել իրենց մարզին մէջ կարեւոր աշխատանք մը կատարած անձեր կամ կազմակերպութիւններ:

ՆՈՊԵԼ ԻՆՉՊԵՍ ՅՐԱՅԱԻ ՄՐՑԱՆԱԿ ՄԸ ՀԻՄՆԵԼՈՒ ԳԱՂԱՓԱՐԸ

Ալֆրետ Նոպէլ 1888-ին ֆրանսական թերթի մը մէջ կը կարդայ իր մասին գրուած «Մահ վաճառողը մահացած է» վերնագրով գրութիւն մը: Մինչ այդ Ռուսիոյ մէջ, մահացած էր իր եղբայրը՝ Լուիֆիլը, եւ լրագրողները սխալմամբ յայտարարած էին Ալֆրետ Նոպէլին մահուան լուրը: Յօդուածը շատ գէշ ազդեցութիւն կը ձգէ Նոպէլի վրայ եւ զինք կը ստիպէ մտածելու այն մասին, թէ մարդիկ ինչպէս պիտի յիշեն զինք իր մահէն ետք: Այդ պատճառով ան կը փոխէ իր կտակը: Այսպէս, իր մահէն մէկ տարի առաջ, ան կը խնդրէ, որ իր հարստութիւնը օգտագործուի ստեղծելու մրցանակներու շարք մը՝ բոլոր անոնց համար, որոնք «մեծագոյն օգուտ կու տան մարդկութեան»՝ բնագիտութեան, քիմիագիտութեան, բժշկութեան, գրականութեան եւ խաղաղութեան մարզերուն մէջ:


Աւելի ուշ, 1969-էն սկսեալ, Շուէտական դրամատան միջնորդութեամբ եւ հովանաւորութեամբ, մրցանակին մարզերուն կ'աւելնայ նաեւ տնտեսագիտութեան (economie) մարզը: Ըստ պաշտօնական աղբիւրներու՝ Ալֆրետ Նոպէլ իր հարստութեան 94%-ը կտակած է Նոպէլեան հիմնադրամին, որ ներկայիս կը կազմէ Նոպէլեան մրցանակին տնտեսական հիմքը:

ՆՈՊԵԼԵԱՆ ՄՐՑԱՆԱԿ

Ամէն տարի Նոպէլի մահուան օրը՝ 10 Դեկտեմբերին, յատուկ արարողութեամբ, Նոպէլեան մրցանակներ կը յանձնուին Շուէտի մայրաքաղաք Սթոքհոլմի մէջ:

Նոպէլեան մրցանակին արժանացողները կը ստանան մետալ մը եւ 1 միլիոն տոլար: Այս դրամը ընդհանրապէս կը գործածուի հետազօտութիւններու կամ բարեսիրական աշխատանքներու համար:

2024-ին, Նոպէլեան մրցանակի արժանացաւ Պոլիս ծնած, հայազգի գիտնական, տնտեսագէտ (economiste) Տարօն Աճեմօղլուն:



Ուժանակ




Նոպէլեան մետալ մը



Տարօն Աճեմօղլուն

ԿԵՆԴԱՆԻՆԵՐԸ ԵՒ ԻՐԵՆՑ ԽՈՒՄԲԵՐԸ

Թռչունների խումբին կ'ըսենք **երամ**, ոչխարների խումբին՝ **հօտ**, ձուկերու խումբին կ'ըսենք **վտառ**, իսկ գայլերու խումբին՝ **վոհմակ**, այծերու խումբին կ'ըսենք **հօրան**, իսկ ձիերու խումբին՝ **երամակ**:



ՇՈՒՔԵՐՈՒ ԹԱՏՐՈՆ

Շուքերու թատրոնի գլխավոր «դերասանները» մեր ձեռքերն են:

Շատ պարզ է: Պատի մը վրայ շուք ունենալու համար, պէտք է ունենալ լուսամփոփ մը, որուն լոյսը ուղղուած ըլլայ պատին: Երբ մեր ձեռքերը դնենք պատին եւ լուսամփոփին միջեւ, կ'ունենանք մեր ձեռքերուն շուքը:

Որքան մեր ձեռքերը հեռացնենք պատէն, այնքան անոնց շուքերը կը մեծան: Իսկ երբ մօտեցնենք մեր ձեռքերը պատին, շուքերը կը փոքրանան:

Ահա թէ ինչպիսի պատկերներ կրնանք ստանալ մեր ձեռքերու տարբեր շարժումներով: Կրնանք նաեւ միաժամանակ խօսիլ պատմութիւն մը յօրինելով:

Ո՛Վ Կ՛ՈՒԶԷ ԲԱԶՄԱԳԵՏ ԸԼԼԱԼ

Յունուար ամսուան հարցումներու պատասխաններուն ժամկէտն է 19 Փետրուար 2025-ը: Հետեաբար, սիրելիներ, արձանագրեցէք զանոնք թուղթի մը վրայ, նշելով ձեր անունն ու ձեր յաճախած դպրոցին անունը: Յետոյ ուղարկեցէք այդ թուղթը «Հորիզոն»ի խմբագրատուն՝

3401 Oliver Asselin
Montreal, Canada
H4J 1L5

1- Երբ կը նշուի Հայկական Բանակին սօճը:

- ա) 2 Յունուարին:
- բ) 10 Դեկտեմբերին:
- գ) 28 Յունուարին:
- դ) 18 Փետրուարին:

2- Ո՛վ ստեղծած է ուժանակը (dynamite):

- ա) Վիքթոր Համբարձումեան:
- բ) Ալֆրետ Նոպէ:
- գ) Մարի Քիւրի:
- դ) Տիմոթի Մենտելիե:

3- 1914-ին որ գորավարին հետ Նժդեհ կը նշանակուի Բ. գունդի փոխ հրամանատար:

- ա) Դրոյի հետ:
- բ) Անդանիկի հետ:
- գ) Սիլիկեանի հետ:
- դ) Սեպուհի հետ:

4- Մայիս 1918-ին, Նժդեհ որ ճակատամարտը կը վարէ:

- ա) Սարդարապատի:
- բ) Ղարաքիլիսէի:
- գ) Բաշ Ապարանի:
- դ) Աւարայրի:

5- Ո՛վ է այն հերոսը, որ Հայաստանի խորհրդայնացումէն եւ Փետրուարեան ապստամբութենէն ետք, մինչեւ 1921-ի ամառը, դէմ կը դնէ համայնավար յարձակումներուն եւ կը դառնայ ինքնավար Սիւնիքի բացարձակ ղեկավարը:

- ա) Արամ Մանուկեան:
- բ) Գէորգ Չաուշ:
- գ) Հրայր Դժոզը:
- դ) Գարեգին Նժդեհ:

6- Ո՛ր թուականին տեղի ունեցած են համահայկական առաջին խաղերը:

- ա) 1141-ին:
- բ) 1999-ին:
- գ) 2023-ին:
- դ) 2000-ին:

7- Համահայկական առաջին խաղերուն որ նշանաւոր մարզիկը վառած է խաղերու ջահը:

- ա) Ալպերթ Ազարեան:
- բ) Դաւիթ Համբարձումեան:
- գ) Արթուր Ալեքսանեան:
- դ) Հենրիկ Մխիթարեան:

8- Ո՛րն է աշխարհի ամենահզօր ջրվէժը:

- ա) Նիակարայի ջրվէժը:
- բ) Վիքթորիա ջրվէժը:
- գ) Անխել ջրվէժը:
- դ) Ռամոնա ջրվէժը:

9- Ուր կը գտնուի Շաքիի ջրվէժը:

- ա) Գանատա:
- բ) Վենզուէլլա:
- գ) Ափրիկէ:
- դ) Հայաստան, Սիւնիքի մարզին մէջ:

10- Ձուկերու խումբին կ'ըսենք՝

- ա) երամ:
- բ) հօտ:
- գ) վտառ:
- դ) վոհմակ:



Մանկապատանեկան Հորիզոնը կը հովանաւորեն ՀՕՄ-ի Գանատայի Շրջանային վարչութիւնը եւ Գանատայի շրջանի իր 10 մասնաճիւղերը

Հեռաձայն (514) 332-3757
Email: sylvia@horizonweekly.ca
Խմբագրութիւն՝ Անահիտ Պալեանի
Թիւր պատրաստեց Սալբի Էլէճեան Քելլեան
Ձեւադրացք՝ Լորի Խաչերեանի